



ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱՐԱՆ

ԼՂՀ վերաքննիչ դատարանի որոշում
Քաղաքացիական գործ N 0801/02/11թ.
Նախագահող դատավոր՝ Գ.Արզումանյան
Դատավորներ՝
 Հ. Խաչատրյան
 Հ. Աբրահամյան

Քաղաքացիական գործ N 0801/02/11թ.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ ՀԱՆՈՒՆ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ք. Ստեփանակերտ

20-ին ապրիլի 2012թ.

ԼՂՀ Գերագույն դատարանը (այսուհետ՝ Գերագույն դատարան) վճռաբեկության կարգով՝

Նախագահությամբ դատավոր՝
Դատավորներ՝

Ի. Կարապետյանի
Ա. Հայրապետյանի
Գ. Գրիգորյանի

դռնբաց դատական նիստում, քննելով ըստ հայցի Մարինե Վալերիի Գրիգորյանի ընդդեմ Արմինե Մեխակի Դավթյանի՝ 1836530 (մեկ միլիոն ութ հարյուր երեսունվեց հազար հինգ հարյուր երեսուն) ՀՀ դրամ բռնագանձելու պահանջի մասին քաղաքացիական գործով ԼՂՀ վերաքննիչ դատարանի 2012թ. փետրվարի 21-ի որոշման դեմ հայցվոր Մարինե Գրիգորյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. Գործի դատավարական նախապատմությունը.

Դիմելով դատարան՝ անհատ ձեռնարկատեր Մարինե Վալերիի Գրիգորյանը խնդրել է Արմինե Մեխակի Դավթյանից բռնագանձել 1.796.530 ՀՀ դրամ վնասի և 40.000 ՀՀ դրամ բաց թողնված օգուտի գումարները, ինչպես նաև նախապես մուծված՝ 36.800 ՀՀ դրամ պետական տուրքի գումարը:

ԼՂՀ ընդհանուր իրավասության առաջին աստիճանի դատարանի /այսուհետ, նաև՝ Դատարան/ 2011թ. դեկտեմբերի 21-ի վճռով հայցը մերժվել է:

Նշված վճռի դեմ վերաքննիչ բողոք է բերել հայցվոր Մարինե Գրիգորյանը:

ԼՂՀ վերաքննիչ դատարանը (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 2012թ. փետրվարի 21-ի որոշմամբ վերաքննիչ բողոքը մերժել է՝ Դատարանի 2011թ. դեկտեմբերի 21-ի վճիռը թողել օրինական ուժի մեջ:

Վերաքննիչ դատարանի որոշման դեմ 2012թ. մարտի 21-ին վճռաբեկ բողոք է ներկայացրել հայցվոր Մարինե Գրիգորյանը:

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Վճռաբեկ բողոքը բերվել է նյութական և դատավարական իրավունքի նորմերի խախտման հիմքերով:

Բողոքաբերը գտնուում է, որ Վերաքննիչ դատարանը մեկնաբանել, սակայն չի ղեկավարվել ԼՂՀ աշխատանքային օրենսգրքի 231-րդ, 232-րդ և 237-րդ հոդվածների պահանջներով, հաշվի չի առել այն հանգամանքը, որ ստորադաս դատարանը ճիշտ գնահատական չի տվել գործում առկա ապացույցներին, խախտել է ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 49-րդ հոդվածի պահանջները, առանց բավարար հիմնավորումների մատնանշել է նույն օրենսգրքի 44-րդ հոդվածի 6-րդ մասի պահանջները, չի կիրառել ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 14-րդ, 17-րդ, 1058-րդ հոդվածների և 345-րդ հոդվածի 2-րդ մասի դրույթները, սխալ է մեկնաբանել նույն օրենսգրքի 504-րդ հոդվածը, արդյունքում կայացրել նույն օրենսգրքի 121-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջներին չհամապատասխանող որոշում ու մերժել բողոքը: Կայացրած որոշումն իր համար առաջացրել է ծանր հետևանքներ:

Բողոք բերած անձը իր դիրքորոշումը հիմնավորել է հետևյալ փաստարկներով.

Ինչպես ԼՂՀ ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանը, այնպես էլ Վերաքննիչ դատարանը ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 14-րդ, 17-րդ, 1058-րդ և 345-րդ հոդվածների կիրառման փոխարեն, մատնանշելով ԼՂՀ աշխատանքային օրենսգրքի 231-րդ, 232-րդ և 237-րդ հոդվածների պահանջներն, եզրահանգել է, որ ստորադաս դատարանը ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 49-րդ հոդվածի խախտում թույլ չի տվել և իբր ճիշտ է եզրահանգել, որ հակառակ նույն օրենսգրքի 44-րդ հոդվածի 1-ին մասի պահանջների հայցվոր կողմը չի ապացուցել իր պահանջը: Վերաքննիչ դատարանը ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 504-րդ հոդվածի 1-ին մասի սխալ մեկնաբանման պատճառով անտեսել է ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 121-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջները, այն է, որ վճիռը պետք է լինի օրինական և հիմնավորված:

Բողոք բերած անձը գտնուում է, որ չնայած օրենսդիրը ապացուցման բեռը դնում է կողմերի վրա՝ ընդլայնելով նրանց իրավունքների շրջանակը, սակայն դրա հետ մեկտեղ պահանջում է դատարանից կայացնել միայն օրինական և հիմնավորված վճիռներ:

Համոզված է, որ առկա է ԼՂՀ աշխատանքային օրենսգրքի 232-րդ հոդվածով նախատեսված պատճառական կապը՝ իրեն պատճառած վնասի և վաճառողի անօրինական գործողությունների միջև, քանի որ վաճառողը հակառակ իր պահանջի, առանց հետևանքների մասին մտածելու ապրանքը գնորդներին ապառիկ վաճառել է սեփական նախաձեռնությամբ և եթե նա նման քայլի չդիմեր, ապա այդ հետևանքները չէին առաջանա, ուստի առկա է նաև նրա մեղքը: Գտնուում է, որ բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ Գերագույն դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար:

Վճռաբեկ բողոք բերած անձը խնդրել է բեկանել Վերաքննիչ դատարանի 2012 թվականի փետրվարի 21-ի որոշումը և կայացնել նոր դատական ակտ՝ հայցապահանջը բավարարելու մասին կամ գործը վերադարձնել ԼՂՀ ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան նոր քննության:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. 2011թ. մարտի 1-ին անհատ ձեռնարկատեր Մարինե Գրիգորյանի և Արմինե Դավթյանի միջև կնքվել է N 2 աշխատանքային պայմանագիր, համաձայն որի՝ Ա.Դավթյանը նույն օրվանից աշխատանքի է նշանակվել ԱԶ Մարինե Գրիգորյանի խանութում որպես սպասարկող /գ.թ.8-9/:

2. Նշված պայմանագրի 2.1.10 կետի համաձայն՝ աշխատող Ա.Դավթյանը պարտավոր է «կրել լիակատար նյութական պատասխանատվություն իր մեղքով Գործատուի ինչպես այլ նյութական արժեքների, այնպես էլ իր պահպանությանը հանձնված արժեքներին իր կողմից պատճառած վնասի դիմաց»:

3. Հայցադիմումը Դատարան է ներկայացվել 2011թ. մայիսի 30-ին հայցվոր Մ.Գրիգորյանի ներկայացուցիչ Լ.Նալբանդյանի կողմից: Հայցվորը 1.836.530 ՀՀ դրամ բռնագանձելու մասին պահանջը հիմնավորել է նրանով, որ Ա.Դավթյանը 2011թ. մարտի 1-ից մինչև ապրիլի վերջն աշխատած ժամանակահատվածում առաջացրել է 1.796.530 ՀՀ դրամի պակասացում, իսկ «երկու օր խանութը փակ մնալու, առևտուր չանելու ու բանջարեղենը փչացնելու» պատճառով իր բաց թողնված օգուտի ու կրած վնասի գումարը կազմել է 40.000 ՀՀ դրամ /գ.թ.3-5/:

4. Գործի նյութերում առկա է առանց ստորագրությունների «պարտքերի ցուցակ» անվանված գրություն, որում նշված է 72 անուն և դրանց դիմաց գրված թվերի ընդհանուր գումարը նշված է «1.796.530» / գ.թ.10-11/:

5. Դատարանի դատական նիստում հայցվորի ներկայացուցիչ Լ.Նալբանդյանը պնդել է հայցը և պարզաբանել, որ 2011թ. մայիսի 1-ին և 2-ին Ա.Դավթյանը խանութը չի բացել: Կատարել են վերստուգում, վեճերից խուսափելու պատճառով դրան մասնակցել էին նաև «Բարեկարգում» ՓԲԸ-ի ներկայացուցիչը, ոստիկանության տեղամասային տեսուչը և պատասխանողի քույրը /գ.թ.46/:

6. Պատասխանող Ա.Դավթյանը հայցը չի ընդունել, նշել է, որ 72 հոգու «պարտքով ապրանք է բաց թողել» /գ.թ.46-48/:

7. Վկա Ա.Աբրահամյանը դատական նիստում ցուցմունք է տվել այն մասին, որ պատասխանող Ա.Դավթյանի խանութում աշխատած ժամանակահատվածում նրանից ապառիկ գնումներ է կատարել 254.610 ՀՀ դրամի, 70.000 ՀՀ դրամը վճարել է, իսկ 180.610 ՀՀ դրամը դեռ չի վճարել /գ.թ.47-48, 53/:

Վկա Ա.Գրիգորյանը, Ա.Բաբայանը, Մ.Բեգլարյանը և մի շարք այլ վկաներ հաստատել են, որ ապառիկ գնումների դիմաց չվճարված գումարներ ունեն:

8. Դատարանի դատական նիստում ցուցմունք են տվել վկաներ Ն.Բալայանը, Գ.Վանյանը, Ք.Ղուլյանը, որոնք վիճարկել են վճարման ենթակա գումարի չափը /գ.թ.54-57/:

9. ԼՂՀ ոստիկանության Շուշիի շրջանային բաժնի 2011թ. նոյեմբերի 21-ի որոշման համաձայն՝ «Աստղիկ Բալայանը, Նունիկ Գալստյանը և Իրինա Բաբաջանյանը հայտարարել են, որ պարտքատեղում իրենց անունների դիմաց ավել է գրանցվել գնումների ընթացքում հաշվարկված գումարը, բայց, թե կոնկրետ ում կողմից, չեն կարողացել նշել: Իսկ Քրիստինե Ղուլյանը հայտարարել է, որ պարտքատեղում իր անունի դիմաց գումարն ավել է գրանցել Ա.Դավթյանը»: Նույն որոշման համաձայն՝ Ա.Դավթյանի կողմից «թերահաշվարկներ կատարելու ու պարտքատեղում հաճախորդների պարտքի գումարներն ավելացնելու փաստերը չեն հաստատվել» ու նախապատրաստված նյութերով քրեական գործի հարուցումը մերժվել է՝ Ա.Դավթյանի արարքում հանցակազմի բացակայության հիմքով /գ.թ.67-70/:

10. Դատաքննության ընթացքում հայցվոր կողմը հայցի մի մասից հրաժարվել և այն պաշտպանել է 928.000 ՀՀ դրամի չափով, հայտնելով, որ դատարան դիմելուց հետո՝ 2011 թվականի դեկտեմբերի 8-ի դրությամբ, թվով 48 գնորդներ, որոնք Ա.Դավթյանից ապառիկ մարման պայմանով ապրանքներ էին գնել, ընդհանուր գումարից մարել են 908.530 ՀՀ դրամ /գ.թ.74/:

4. Գերագույն դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը

Քննելով վճռաբեկ բողոքը նշված հիմքերի սահմաններում՝ Գերագույն դատարանը գտնում է, որ այն հիմնավոր է հետևյալ պատճառաբանությամբ.

ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 26-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերի համաձայն՝ դատարանը, գործի նախապատրաստման կամ քննության ժամանակ, պարզելով, որ հայցը հարուցվել է ոչ այն անձի կողմից, որին պատկանում է պահանջի իրավունքը կամ ոչ այն անձի դեմ, ով պետք է պատասխանի այդ հայցով, կարող է հայցվորի համաձայնությամբ թույլ տալ, որ նա կամ պատասխանողը փոխարինվեն պատշաճ հայցվորով կամ պատասխանողով: Եթե հայցվորը համաձայն չէ պատասխանողին ուրիշ անձով փոխարինելուն, դատարանը կարող է այդ անձին մասնակից դարձնել որպես երկրորդ պատասխանող:

ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 43-րդ հոդվածի համաձայն՝ գործով ապացույցներ են սույն օրենսգրքով և այլ օրենքներով նախատեսված կարգով ձեռք բերված տեղեկությունները, որոնց հիման վրա դատարանը պարզում է գործին մասնակցող անձանց պահանջները և առարկությունները հիմնավորող, ինչպես նաև վեճի լուծման համար նշանակություն ունեցող այլ հանգամանքների առկայությունը կամ բացակայությունը: Այդ տեղեկությունները հաստատվում են՝ 1) գրավոր և իրեղեն ապացույցներով, 2) փորձագետների եզրակացություններով, 3) վկաների ցուցմունքներով, 4) գործին մասնակցող անձանց ցուցմունքներով: Օրենքի խախտմամբ ձեռք բերված ապացույցներն իրավաբանական ուժ չունեն և չեն կարող դրվել դատարանի վճռի հիմքում:

ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 44-րդ հոդվածի 1-ին, 2-րդ և 6-րդ մասերի համաձայն՝ գործին մասնակցող յուրաքանչյուր անձ պետք է ապացուցի իր վկայակոչած փաստերը: Գործի լուծման համար էական նշանակություն ունեցող ապացուցման ենթակա փաստերը որոշում է դատարանը՝ գործին մասնակցող անձանց պահանջների և առարկությունների հիման վրա: Եթե բոլոր ապացույցների հետազոտումից հետո վիճելի է մնում փաստի առկայությունը կամ բացակայությունը, ապա դրա բացասական հետևանքները կրում է այդ փաստի ապացուցման պարտականությունը կրող կողմը:

ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 45-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ապացույցները ներկայացնում են գործին մասնակցող անձինք: Նույն օրենսգրքի 47-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գործի հանգամանքները, որոնք, օրենքի կամ այլ իրավական ակտերի համաձայն, պետք է հաստատվեն միայն որոշակի ապացույցներով, չեն կարող հաստատվել այլ ապացույցներով:

Վերը նշված հոդվածներով օրենսդիրը հստակ սահմանել է ապացույցների հասկացությունը և տեսակները, դրանց թույլատրելիությունն ու վերաբերելիությունը: Իսկ ապացուցման պարտականությունը ճիշտ բաշխելու համար անհրաժեշտ է պարզել յուրաքանչյուր գործի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստերը՝ ելնելով գործին մասնակցող անձանց պահանջներից և առարկություններից:

Գերագույն դատարանը գտնում է, որ սույն գործով անհրաժեշտ է պարզել այն իրավական հարցադրումը, թե որ փաստերն են հաստատված դատական նիստում հետազոտված ապացույցներով, որոնք են գործի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստերը և որ կողմը պետք է կրի այդ փաստերի ապացուցման դատավարական բեռը:

Դատարանը հայցը մերժելիս հիմք է ընդունել այն հանգամանքը, որ Արմինե Դավթյանից 888.000 ՀՀ դրամ գանձման ենթակա գումարը ոչ թե խանութի պակասորդն է, այլ խանութի հաճախորդների պարտքով՝ ապառիկ մարման պայմանով գնված ապրանքների արժեքը, որն էլ հաճախորդներն ընդունում են և պարտքի գումարները մաս-մաս մարում: 40.000 ՀՀ դրամ գումարի պահանջի վերաբերյալ Դատարանը արձանագրել է, որ դատաքննությամբ վիճելի է մնացել խանութի փակ մնալու պատճառով բաց թողնված օգուտը և խանութում գտնվող բանջարեղենը փչանալու փաստերը, քանի որ հայցվոր կողմը պատշաճ ապացույց չի ներկայացրել:

Վերաքննիչ դատարանն իր որոշումը պատճառաբանել է նրանով, որ ԼՂՀ ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանը ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 49-րդ հոդվածի խախտում թույլ չի տվել ու ճիշտ է եզրահանգել, որ հայցվորի կողմից պահանջվող 888.000 ՀՀ դրամ գումարը ոչ թե պատասխանողի մեղքով թույլ տրված պակասորդ է, այլ իրականում խանութի հաճախորդներին պարտքով՝ ապառիկ մարման պայմանով վաճառված ապրանքների արժեքն է, որից վերջիններս չեն հրաժարվում, իսկ ապրանքի ապառիկ վաճառքն արգելված չէ ու նախատեսված է ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 504-րդ հոդվածով: Վերաքննիչ դատարանը ճիշտ է համարել նաև Դատարանի եզրահանգումը 40.000 ՀՀ դրամ գումարի պահանջի վերաբերյալ, քանի որ ներկայացված բոլոր ապացույցների հետազոտումից հետո այդ փաստերը մնացել են վիճելի, ինչի բացասական հետևանքները կրում է հայցվոր կողմը:

Գերագույն դատարանը անհրաժեշտ է համարում արձանագրել, որ նշված եզրահանգումները հիմնված չեն սույն քաղաքացիական գործով հաստատված փաստերի վրա, քանի որ գործում առկա ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտությամբ ակնհայտ է դառնում հետևյալը.

- գործով չի վիճարկվում Ա.Դավթյանի և Մ.Գրիգորյանի միջև կնքված աշխատանքային պայմանագիրը լուծելու դրությամբ 1.796.530 ՀՀ դրամ գումարը որպես խանութի սպասարկող Ա.Դավթյանին հանձնած ապրանքանյութական արժեքների պակաս լինելու փաստը,

- դատաքննության ընթացքում 2011 թվականի դեկտեմբերի 8-ի դրությամբ մի շարք գնորդներ, որոնք Ա.Դավթյանից ապառիկ մարման պայմանով ապրանքներ էին գնել, ընդհանուր գումարից մարել են 908.530 ՀՀ դրամ՝ գումարը վճարելով Մ.Գրիգորյանին,

- գանձման ենթակա գումարի մի մասն ապառիկ մարման պայմանով գնված ապրանքների արժեքն է,

- որպես վկա հարցաքննված մի շարք ապառիկ մարման պայմանով ապրանք ստացած գնորդները վիճարկում են վճարման ենթակա գումարի չափը, իսկ մի մասի դիրքորոշումն էլ պարզ չէ:

Գերագույն դատարանը գտնում է, որ նման պայմաններում Վերաքննիչ դատարանի այն եզրահանգումը, որ պահանջվող 888.000 ՀՀ դրամ գումարը ոչ թե պատասխանողի մեղքով թույլ տված պակասորդ է, այլ իրականում խանութի հաճախորդներին պարտքով՝ ապառիկ մարման պայմանով վաճառված ապրանքների արժեքն է, որից վերջիններս չեն հրաժարվում, հիմնավորված չէ դատական նիստում հետազոտված ապացույցներով:

ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 49-րդ հոդվածի համաձայն՝ դատարանը յուրաքանչյուր ապացույց գնահատում է գործում եղած բոլոր ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտության վրա հիմնված ներքին համոզմամբ: Դատարանի համար որևէ ապացույց նախապես հաստատվածի ուժ չունի, բացառությամբ նույն օրենսգրքի 48-րդ հոդվածով նախատեսված դեպքերի:

ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 121-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ դատարանի վճիռը պետք է լինի օրինական և հիմնավորված: Դատարանը վճիռը հիմնավորում է միայն դատական նիստում հետազոտված ապացույցներով:

ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 230-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ կետի համաձայն՝ վերաքննիչ դատարանի որոշման մեջ պետք է նշվեն գործով պարզված և վերաքննիչ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը, ինչպես նաև այն օրենքը, ԼՂՀ միջազգային պայմանագրերը և այլ իրավական ակտերը, որոնցով ղեկավարվել է վերաքննիչ դատարանը որոշում կայացնելիս:

Գերագույն դատարանը գտնում է, որ յուրաքանչյուր դեպքում դատարանը պարտավոր է տալ կայացրած որոշման իրավական հիմնավորումը: Որոշման իրավական հիմնավորումը կայանում է հաստատված փաստերի և իրավահարաբերությունների նկատմամբ իրավունքի համապատասխան նորմի կամ նորմերի ընտրության և կիրառման մեջ, այն նորմերի, որի

հիման վրա դատարանը եզրակացություն է անում վիճելի իրավահարաբերության առկայության կամ բացակայության մասին:

Որոշման մեջ ոչ միայն պետք է ցույց տալ նորմատիվ ակտի այս կամ այն հոդվածը, որում ամրագրված է կիրառման ենթակա նորմը, այլ պետք է պատճառաբանվի, թե հատկապես ինչու պետք է կիրառվի հենց այդ նորմը:

Սույն գործով Գերագույն դատարանն արձանագրում է, որ վիճելի է մնացել 888.000 ՀՀ դրամը ամբողջությամբ ապառիկ մարման պայմանով գնված ապրանքների արժեքը լինելու և գնորդների կողմից այն լրիվությամբ ընդունելու հանգամանքը, իսկ տվյալ փաստերի ապացուցման պարտականությունը կրում է պատասխանող Ա.Դավթյանը, այսինքն այն անձը, ով այդ ապրանքների համար կրում էր նյութական պատասխանատվություն: Անդրադառնալով 40.000 ՀՀ դրամ գումարի պահանջին, Գերագույն դատարանը գտնում է, որ դատաքննության ընթացքում բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ չի հետազոտվել հայցվորի վկայակոչած փաստերը, ուստի և տվյալ պահանջի վերաբերյալ Վերաքննիչ դատարանի եզրահանգումը նույնպես անհիմն է:

Նման հանգամանքներում, Գերագույն դատարանը վճարեկ բողոքի նյութական իրավունքի նորմերի խախտման հիմքերին չի անդրադառնում, քանի որ առանց վերը նշված փաստական հանգամանքերի բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտության նպատակահարմար չի համարում իրավական գնահատական տալ նյութական պատասխանատվության առաջացման և վնասների հատուցման վերաբերյալ հարցերին:

Գերագույն դատարանը գտնում է, որ ստորադաս դատարանների կողմից թույլ է տրվել ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 44-րդ, 47-րդ և 49-րդ հոդվածների պահանջների խախտում, որը հանգեցրել է գործի սխալ լուծման:

Այսպիսով, վճարեկ բողոքի դատավարական իրավունքի նորմերի խախտման հիմքերի առկայությունը, Գերագույն դատարանը դիտում է բավարար՝ ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 241-րդ հոդվածի ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու և գործը նոր քննության ուղարկելու համար:

Ելնելով վերոգրյալներից և ղեկավարվելով ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 253-256-րդ հոդվածներով, Գերագույն դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Հայցվոր Մարինե Վալերիի Գրիգորյանի վճարեկ բողոքը բավարարել: ԼՂՀ վերաքննիչ դատարանի 2012թ. փետրվարի 21-ի որոշումը բեկանել և գործն ուղարկել ԼՂՀ ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան՝ նոր քննության:

2. Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝

Ի.ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝

**Ա. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ
Գ.ԳՐԻԳՈՐՅԱՆ**